

ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ ՎԱՍՆ ՆԻԿՈՄԻԴԵԱՅ

Ֆրեսկերից Մուրատ 1927 - 1930 թուականներուն Սիոն Ամսագրին մէջ հրատարակեց Եփրեմ Խուրիի Վեշտասան Ասացուածքը, առնելով Սրբոց Յաւորեանց թիւ 326 ձեռագրէն:

Այս քերթողական ընդարձակ գործին ասորերէն բնագրէն ցարդ զոտնուած են փոքր հատուածներ միայն — բացի Իններորդ Ասացուածէն որ կայ ամբողջութեամբ — որով հայերէն հին թարգմանութիւնը կը ստանայ բացառիկ արժէք:

Նախորդ տարի լոյս տեսաւ Եփրեմի այս գործին նոր հրատարակութիւնը, հանդերձ Ֆրանսերէն թարգմանութեամբ և ի յայտ բերուած ասորերէն բնագրերով: Աշխատասիրողն է հայագէտ Շարլ Բընու:

Պէտք է ըսել որ թիւ 326 ձեռագիրն ալ լման չէ. վասնզի իր ներկայ կազմը ստանալէ առաջ, երբ գիրքը տակաւին առանձին հատորով կը ներկայանար, սկիզբի 14 թերթիւր ինկած կորսուած են, որով առաջին երկու Ասացուածները ամբողջովին, և երրորդ Ասացուածին մէկ մասը զոհ գացած են վաղուց՝ ժամանակի ամենակեր ժանիքներուն:

Բարբախտութիւն մը եղած է որ գրասէր մեծ եկեղեցական մը՝ Ներսէս Արքեպիսկոպոս Լամբրոնացի, ժամանակին գնահատելով այս մեծաշունչ քերթուածը, օրինակել տուած է զայն իր աշակերտներէն մէկուն՝ ճարտար գործիչ Յովհաննէսին. ահա այդ օրինակն է որ հասած է մեզի՝ հեռաւոր հնութեան մը խորքերէն, ապա թէ ոչ համաշխարհային գրականութիւնը և ասորական մատենագրութիւնը պիտի չունենային այսօր այդ մեծաբարդ գրական յուշարձանը:

Շարլ Բընուի հրատարակութիւնը օժտուած է ընդարձակ ներածութեամբ մը, ուր խղճմտօրէն քննուած են Եփրեմի այս գործին առնչակեց բազմաթիւ հարցեր (էջ XIII—LXX): Բնագիրը կը գրաւէ 343 էջեր, մէկ կողմը հայերէն, տեղտեղ հանդերձ ասորերէն բնագրով, իսկ միւս կողմը՝ Ֆրանսերէն թարգմանութիւնը:

Տպագրութեան ժանդակած է ամէն գովեստի արժանի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը: Patrologia Orientalis մատենաշարին մաս կազմող այս հատորը իբրև խնամեալ աշխատանք պատիւ կը բերէ հայագէտ հեղինակին:

Տպագրական մանր վրիպակները, և թարգմանական փոքր սխալները, որ կը տեսնուին տեղտեղ, մեծ կշիռ մը չեն ներկայացներ^(*): Գիրքը իր ամբողջութեանը մէջ առ հասարակ յաջողած է բարձր աստիճանով:

ԾՈՒՎԱԿԱՆ

(*) Թերևս օգտակար կ'ըլլայ ուղղումը սխալի մը, որ կը գտնուի 166-րդ էջիմ վրայ, տալ 889. «Եթէ զԱրեմնեք անրեաց ելաց»․ պէտք է ուղղել, «Եթէ զԱրեմնեք ներեայ ելաց»․ հմմտ. Բ. Թագ. Գ. 23: